



191. ԱՐԱԳԻԼՆ ՈՒ ՍԱԳԸ

Մի անգամ սագը ուռած-փքված, պարծենում էր իր շրջապատողների մեջ, ասելով.—Ո՛վ կա ինձնից ուժեղ, ծովում լողալ գիտեմ, ցամաքում՝ ման գալ և օդում՝ թռչել, էդ ժամանակ ծառի բարձր կատարին թառած էր արագիլը, հրր լսեց սագի փքված խոսքերը, ցած իջավ և հարցրեց.

—Լսի՛ր, սագիկ փույրիկ, ասա, դու օդում արծվի պես թռչել գիտե՞ս:

—Ո՛չ,—պատասխանում է սագը:

—Լա՛վ, շրո՞ւմ ձկան պես լողալ գիտե՞ս:

—Ո՛չ,—դարձյալ պատասխանում է սագը:

—Յամաքում աղվեսի պես վազել գիտե՞ս:

—Ո՛չ, այդ էլ չգիտեմ:

—Ուրեմն էլ մի պարծենա, ով շատ բաներ իմանալու ձգտի, ոչ մեկին էլ չի տիրապետի, շատ բաներից քիչ իմացողը ոչինչ չի իմանա,—ասում է արագիլն ու թևին տալիս, թռչում:

